ԹԵՄԱ 1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐ: ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1.1 Աշխարհագրական գիտության պատմական զարգացումը: Ուսումնասիրության առարկան, նպատակը և հիմնական խնդիրները:

1. Էրատոսթենեսի գիտական վաստակը հատկապես բարձր է գնահատվում **աշխարհագրական կոորդինատների** համակարգի հայտնագործման և Երկրի շրջանագծի չափման գործում: Նա իր կազմած քարտեզը ծածկեց հորիզոնական ու ուղղաձիգ գծերից կազմված ցանցով՝ **աստիճանացանցով**:

Ժամանակակից **միջօրեականների** և **զուգահեռականների** այս «նախնիները» հնարավորություն էին տալիս որոշելու այս կամ այն վայրի տեղադիրքը քարտեզի վրա՝ «հասցեն»: Բացի դրանից, աստղագիտական դիտարկումների հիման վրա չափելով Ալեքսանդրիա և Սիենա (այժմ՝ Ասուան, քաղաքները գտնվում են Եգիպտոսում) քաղաքների միջև ընկած միջօրեականի աղեղի երկարությունը, Էրատոսթենեսը կարողացավ որոշել Երկրի շրջանագծի երկարությունը (մաթեմատիկայից արդեն անցել եք և կարող եք բացատրել, շրջանագծի երկարությունը 2ΠR է): Պատկերացրեք՝ նրա հաշվարկներն աննշան սխալ էին պարունակում. նա ստացավ 39600 կմ՝ 40008 կմ-ի փոխարեն: Այսպիսով, Էրատոսթենեսը մշակեց նաև եվրոպական քարտեզագրության հիմնական սկզբունքները:

Առաջին աշխարհագրագետները եղել են ճանապարհորդներն ու ծովագնացները, որոնք հայտնաբերելով նոր տարածքներ, նկարագրել են դրանց բնությունը, բնակչությանը և նրա զբաղմունքը, հասարակական հարաբերությունների բնույթն ու կառուցվածքը և կատարել պարզագույն գծագրեր: Այդ նկարագրությունները հետագայում աշխարհագրական առաջին աշխատությունների, իսկ պարզագույն գծագրերը՝ ժամանակակից քարտեզների հիմքը դարձան:

2. Այժմ Երկրի վրա «սպիտակ բծեր» չկան: Աշխարհագրական քարտեզներն անընդհատ լրացվել են և ճշգրտվել, իսկ ժամանակակից քարտեզները կազմվում են տիեզերական արբանյակների օգնությամբ: Գուցե ընդամենը վերջերս են քարտեզագրվել մինչև մեր օրերը դեռևս անհայտ կղզիներն ու լեռները, Համաշխարհային օվկիանոսի խորքերը, Անտարկտիդայի թույլ հետազոտված շրջանները:

3. Հարյուրամյակներ շարունակ աշխարհագրությունն ամենահարգված գիտությունն էր: Թագավորներն ու կայսրերը բարձր են գնահատել և անձամբ են ընդունել մեծ ճանապարհորդներին, ժամերով լսել նրանց պատմությունները՝ հայտնագործված ցամաքների և ծովերի, կղզիների հեքիաթային հարստությունների մասին, պատկառանքով վերաբերվել նրանց կազմած քարտեզներին, հպարտացել իրենց նվաճած նոր տարածքների սահմանները ցույց տվող քարտեզներով, թագավորական գանձարանի հարստացմամբ և այլն: Օրինակ՝ Նապոլեոնը, երբ ուղևորվում էր Եգիպտոսը նվաճելու, արշավանքում ընդգրկել էր նաև մեծ թվով գիտնականների, հատկապես՝ աշխարհագրագետների ու պատմաբանների: Արկածներով ու խիզախություններով լի աշխարհագրության հետաքրքրաշարժ պատմությունը վառ արտահայտված է Անանիա Շիրակացու, Ղևոնդ Ալիշանի, Ժյուլ Վեռնի, Մայն Ռիդի, Ստեֆան Ցվայգի, Ջեկ Լոնդոնի, Ալեքսանդր Դյումայի և այլոց ստեղծագործություններում:

3. Աշխարհահամակարգերն ընդգրկում են տարբեր մեծության տարածքներ՝ բնակավայրից մինչև գերխոշոր պետություններ, լանդշաֆտի փոքր տեղամասերից մինչև ամբողջ աշխարհագրական թաղանթը: Բոլոր աշխարհահամակարգերը միմյանց հետ փոխազդում են՝ ցամաքը և օվկիանոսը, բնությունն ու տնտեսությունը, կլիման և անտառը և այլն:

4. բ) **Բնական և հասարակական երևույթների տարածքային վերլուծություն**: Ուսումնասիրվում են բնատարածքային և հասարակության տարածքային կազմակերպման ընդհանուր գծերն ու օրինաչափությունները: Կարելի է ձևակերպել նաև այսպես. շրջակա միջավայրի ուսումնասիրման, նպատակահարմար օգտագործման և վերափոխման խնդիր, որի նպատակն է շրջակա միջավայրը պահպանել այնպիսի վիճակում, որպեսզի հասարակությանը մշտապես ապահովի անհրաժեշտ նյութերով և ծառայի նաև հաջորդ սերունդներին:

գ) **Բնակչության և տնտեսության նպատակահարմար տեղաբաշխման խնդիրը**, որպեսզի գիտականորեն հիմնավորվի արտադրական ձեռնարկությունների, սոցիալական հիմնարկների, բնակավայրերի այնպիսի տեղաբաշխումը, որպեսզի արտադրությունը դառնա առավել արդյունավետ և նյութերի, էներգիայի ու աշխատաժամանակի նվազագույն ծախսերով ապահովի ավելի մեծ արդյունք:

5. *Աշխարհագրության արդի զարգացման միտումները*

Գիտության արդի զարգացման միտումներն են՝ **մարդկայնացումը** (հումանիզացիա), **սոցիալականացումը** (սոցիոլոգիզացիա), **էկոլոգիականացումը**

(էկոլոգիզացիա), **տնտեսագիտականացումը** (էկոնոմիզացիա), **մաթեմատիկանացումը** (մաթեմատիզացիա), **քաղաքականացումը** (պոլիտիզացիա), **համաշխարհայնացումը** (գլոբալիզացիա), **հրատապեցումը** (ակտուալիզացիա) և այլն:

Մարդկայնացման էությունն այն է, որ գիտության ուշադրության կենտրոնում մարդն է և նրա կենսագործունեությունը: Կարևորվում է ոչ արտադրական՝ սպասարկման ոլորտը, մասնավորապես, գիտությունը, կրթությունը, զբոսաշրջությունը, առողջապահությունը, հանգստաժամը (ռեկրեացիան):

Սոցիալականացումը սերտորեն կապված է մարդկայնացման հետ: Տարածքի զարգացման գործում ազգաբնակչության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելը բավարար չէ, որովհետև սոցիալական գործոնների դերը դրանով չի սահմանափակվում: Ձևավորվում է, այսպես կոչված, սոցիոլորտը (սոցիոսֆերան): Մարդն առաջին հերթին դիտվում է ոչ թե որպես աշխատանքային ռեսուրս, այլ սոցիալական էակ: Կարևորվում են տարբեր տարածաշրջանների ազգաբնակչության ապրելակերպը, կենսամակարդակը, կյանքի որակը, առողջության, անվտանգության վիճակը և դրանք բարելավելու հիմնահարցերը: Մարդը կարևորվում է նաև որպես նյութական և հոգևոր բարիքներ, արժեքներ ստեղծող:

Էկոլոգիականացման առանցքում շրջակա բնական միջավայրն է: Մարդու տնտեսական գործունեությունը մեծապես ազդում է շրջակա միջավայրի որակի վրա: Ավելի կարևորվում են բնօգտագործման, բնապահպանության, բնության վերափոխման, մարդ–բնություն փոխհարաբերությունների արդյունավետ ու ներդաշնակ զարգացման, հասարակության կայուն զարգացման հիմնահարցերը:

Տնտեսագիտականացման էությունն այն է, որ աշխարհագրական հետազոտություններում լայնորեն օգտագործվում են տնտեսագիտական հասկացություններ, եզրույթներ, տնտեսական հաշվարկներ ու վերլուծություններ, վիճակագրական մեթոդների կիրառում, օբյեկտի տնտեսաաշխարհագրական դիրքի գնահատման, տնտեսության զարգացման մակարդակի որոշման այնպիսի պարամետրեր, որոնք ավելի հիմնավորված են դարձնում աշխարհագրական վերլուծությունները:

Աշխարհագրությունը՝ որպես գիտություն, պետք է հնարավորինս լինի **աշխարհագրականացված** (գեոգրաֆիզացված):

Մաթեմատիկանացումն ավելի ճշգրիտ ու փաստարկված է դարձնում աշխարհագրական հետազոտությունը: Օգտագործվում են մաթեմատիկական մեթոդներ և մոդելներ, որոնք հատուկ ցույց են տալիս երևույթների և գործընթացների քանակական և որակական իրական պատկերը: Չմոռանանք, որ մաթեմատիկանացումը չպետք է գերագնահատվի, որովհետև աշխարհագրական երևույթները շատ դինամիկ են և կարող են արագ փոփոխվել տարածության և ժամանակի մեջ:

Քաղաքականացումը չպետք է դիտարկվի միայն առանձին պետությունների,

քաղաքական, ռազմաքաղաքական բլոկների հետապնդած քաղաքական շահերի համատեքստում: Այս ուղղությունն ավելի կարևոր է աշխարհի քաղաքատարածքային բաժանման համատեքստում՝ աշխարհի քաղաքական քարտեզի փոփոխությունները, պետությունների կառավարման ձևը, պետական կառուցվածքը, ժամանակակից համաշխարհային քաղաքական զարգացման հիմնական ուղղությունները, քաղաքական-աշխարհագրական դիրքն (ՔԱԴ) ու աշխարհաքաղաքական զարգացումները (գեոպոլիտիկա) և այլն:

Համաշխարհայնացման էությունը բացատրվում է բնություն-հասարակություն փոխազդեցությունների բնույթով և մակարդակով, մարդկության առջև ծառացած հիմնախնդիրների համամարդկային դրսևորումներով:

Հրատապեցման ուղղության էությունն այն է, որ աշխարհագրական հետազոտությունները պետք է լինեն աշխարհագրական երևույթների, ժամանակակից իրադարձությունների «զարկերակի» վրա և գիտությունը պետք է լինի արդիական ու դառնա նաև մարդու կյանքի, առողջության, անվտանգության հուսալի պաշտպանը:

Ամփոփելով գիտության զարգացման միտումները, հարկ է նշել, որ նշվածներից յուրաքանչյուրը հիմնականում ներկայացնում է մեկ տեսանկյուն, ինչը կարող է գերագնահատվել և գիտությունը կտրել իր արմատներից: Ուստի, գիտությունը որքան զարգանա, այն պետք է հավատարիմ մնա իր սկզբունքներին: